

Հաշվետու գործակալությունը՝	ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիր Գլոբալ Էկոլոգիական Ֆոնդի մասով
Երկիրը՝	Հայաստան ԱՌԱՋՆԹԱՅԻ ՍՏԱՆԴԱՐՏ ԶԵԿՈՒՅՑ
Համարը և անվանումը՝	Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում, ՄԱԶԾ/ԳԷՖ/00057439
Հաշվետու ժամանակաշրջանը՝	2010թ. հունվար- դեկտեմբեր

I. ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է պահպանել գլոբալ նշանակություն ունեցող Հայաստանի կենսաբազմազանությունը: Ծրագրի խնդիրն է նպաստել արգելավայրերի ընդլայնմանը՝ ապահովելու ներկայիս պահպանվող տարածքների համակարգի ներքո էկոհամակարգերի առավել ընդգրկուն ներկայացվածությունը և առավել ակտիվ մոտեցում ցուցաբերելու կենսաբազմազանության պահպանության գործում: Ծրագրի երկու հիմնական շեշտադրումներն են. (1) ռացիոնալացնել պահպանվող տարածքների համակարգը՝ արգելավայրերի կայացմանն ու գործարկմանը վերաբերող իրավական կարգավորման և ինստիտուցիոնալ համակարգերը բարելավելու միջոցով և (2) զարգացնել ինստիտուցիոնալ կարողությունները՝ փորձարկելով հատուկ պահպանվող տարածքների կառավարման ներկայումս Հայաստանում գրեթե գոյություն չունեցող գործիքները:

Ծրագրի հիմնական արդյունքներն են՝

1. Արգելավայրերի ստեղծման, կառավարման և բիզնես պլանավորման ազգային գործառնական ուղեցույցներն ու նորմերը: Ուղեցույցները հստակ կսահմանեն (i) տարբեր նպատակներով արգելավայրերի օգտագործումը, (ii) արգելավայրերի կանոնադրությունների բովանդակությունը, նպատակը և մշակման գործընթացը, (iii) արգելավայրերի ֆինանսավորումը, (iv) արգելավայրերում կառավարման միավորների ստեղծումը, արգելավայրերի կառավարմանը համայնքների մասնակցությունը, (v) կառավարման մոդելը, բիզնես պլանը և դրանց մշակման ուղեցույցները, (vi) կենսաբազմազանության պահպանության մոդելները:

2. Կմշակվի արգելավայրերի կառավարման գործում տարբեր հաստատությունների ինստիտուցիոնալ պարտականությունները և պատասխանատվությունները ամրագրող ենթաօրենսդրական ակտ:

3. Կստեծվեն երեք նոր արգելավայրեր՝ «Գնիշիկ»՝ Վայոց Ձորի մարզում, «Խուստուվի» և «Զանգեզուր»՝ Սյունիքի մարզում, մոտ 48,000 հեկտար ընդհանուր մակերեսով:

4. Կմշակվի հայեցակարգ երկու կոնկրետ մոդելների վերաբերյալ (զուտ համայնքային կառավարում և համատեղ կառավարում), որոնք կփորձարկվեն երեք համապատասխան արգելավայրերում:

5. Ազգային ուսումնական դասընթացներ, շեշտադրելով IUCN-ի IV կատեգորիայի արգելավայրերը: Տեղական մակարդակով ծրագիրը կնպաստի ցուցադրական արգելավայրերում տեղեկատվական և կրթական երեք կենտրոնների ստեղծմանը:

6. Կմշակվեն և յուրաքանչյուր փորձնական արգելավայրում կիրականացվեն համակցված կառավարման և բիզնես պլաններ, որոնք հիմնված կլինեն միջազգային փորձի վրա և կհանդիսանան փոքր բիզնեսի համար իրապաշտական ուղեցույց: Պլանները կօգտագործվեն որպես ռեսուրսների կայուն օգտագործման, ինչպես նաև տուրիզմի, կայուն արածեցման, կարգավորված սիրողական որսորդության և վաճառման ենթակա բույսերի հավաքման հիմք:

7. Կառավարման և եկամտաբեր գործունեության մեկնարկ՝ (i) տեղական համայնքների անդամների աջակցությամբ և մասնակցությամբ որսագողության դեմ պայքարելու գործիքներ. (ii) էկոհամակարգերի մոնիթորինգի ծրագրերի իրականացում. (iii) կենդանիների արածեցման

համակողմանի ծրագրի իրականացում. (iv) տուրիզմի կայուն զարգացում:

8. Կենսաբազմազանության արդյունավետ պահպանության ոլորտում արգելավայրերի ձախողումը հաղթահարող կրիտիկական զանգվածի ցուցադրում:

Սույն Ծրագրի ջանքերը կգործադրվեն հատուկ պահպանվող տարածքների ազգային համակարգը ավելի լավ զինելու համար, ինչը հնարավորություն կտա ներառել և պահպանել ներկայումս թերի ներկայացված էկոհամակարգերը և դրանց կապակցված տեսակները: Համայնքային տարածքներում ծրագիրը ներդրում կունենա լանդշաֆտների արդյունավետ կառավարման ապահովման գործընթացին, նպաստելով չքավորության նվազեցմանը: Ծրագիրը կհզորացնի Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի ֆինանսական կայունությունը:

Ծրագիրը ներդրում է ունենում ՄԱԿԶԱԾ (UNDAF) ձեռքբերում 4-ին և ՀՕ (CP) ձեռքբերում 7-ին, ՀՕԳՊ (CPAP) արդյունք 7.4-ին:

Ծրագրի կատարող կազմակերպություններն են հանդիսանում ՀՀ բնապահպանության նախարարությունը և «Բնապահպանական ծրագրերի կենտրոն» ՊՈԱԿ-ը (Պահպանվող տարածքների համակարգի ռացիոնալացում):

II. ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ծրագրի ռեսուրսները լիովին գալիս են ԳԷՀ-ի 950,000 ԱՄՆ դոլար ֆինանսավորումից, այդ թվում 2010թ.՝ 216,750 ԱՄՆ դոլար: Ծրագրի ընդհանուր բյուջեն, ներառյալ համաֆինանսավորումն ու ԳԷՀ-ի (GEF) միջոցները, կազմում է 2,950,000 ԱՄՆ դոլար: Համաֆինանսավորումը կազմում է 2,000,000 ԱՄՆ դոլար, ներառյալ ՀՀ բնապահպանության նախարարության (ՀՀ ԲՆ) կողմից հատկացվող 1,500,000 ԱՄՆ դոլարի համարժեք գումարը և ԲՀՀ-ի (WWF) կողմից հատկացվող 500,000 ԱՄՆ դոլարը:

III. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները՝ հետևյալ արդյունքների ձեռք բերմամբ.

1. **Ծրագրի կառավարում.** Ծրագրի մեկնարկային սեմինարը Ծրագրի Ղեկավար կոմիտեի անդամների մասնակցությամբ կազմակերպվել է 2010թ. փետրվարի 8-ին: Ծրագրի Ղեկավար կոմիտեի անդամները որոշեցին՝ (i) Ծրագիրն ընդունելի է այնպես, ինչպես ձևակերպվել է. ոչ մի հավելյալ պարզաբանումների և փոփոխությունների կարիք չկա, (ii) հաստատել Ծրագրի աշխատանքային 2010թ. տարեկան ծրագիրը՝ հաշվի առնելով կոմիտեի անդամների կողմից ստացված առաջարկությունները:

2. **Ծրագրի անձնակազմը և ենթակապալառուները:** Ծրագրի ղեկավարի հետ համապատասխան ծառայությունների պայմանագիրը ստորագրվել է 2010թ. փետրվարին, իսկ Ծրագրի օգնականի հետ՝ 2010թ. հունիսին: IUCN IV կատեգորիայի պահպանվող տարածքի միջազգային փորձագետն ընտրվել է հունիսին և իր պարտականությունները ստանձնել 2010թ. օգոստոսին: Հայաստանյան ՄԱԶՕ-ի և ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի կենտրոն» (ԲՕԿ) ՊՈԱԿ-ի միջև 2010թ. հունվարի 22-ին կնքվել է պայմանագիր, համաձայն որի ԲՕԿ ՊՈԱԿ-ը հանդիսանում է ծրագրի «Պահպանվող տարածքների համակարգի ռացիոնալացում» (քաղաքականություն եւ կանոնակարգեր) բաղադրիչի պատասխանատուն: 2010թ. հոկտեմբերի 4-ին ծրագրի համագործակցության համաձայնագիր է ստորագրվել ՄԱԶՕ և WWF – Հայաստանի միջև՝ «Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում. կարողությունների զորացման և կառավարման համակարգի բարելավում» ՄԱԶՕ-ԳԷՀ 00060500/00076187 միջին ծավալի ծրագիրն իրականացնելու նպատակով: «Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում. կարողությունների զորացման և կառավարման համակարգի բարելավում» Ծրագիրը փոխարացնում է սույն Ծրագրին և կազմում է 300,000 ԱՄՆ դոլար: Համաձայն Համաձայնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետի՝ WWF- Հայաստանը պարտավորվում է հաշվետվությունները ներկայացնել անմիջապես «Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում» Ծրագրի ղեկավարին: Նախքան համաձայնագրերի կնքումը «Ամերիա» ՓԲԸ-ի կողմից իրականացվել է ԲՕԿ ՊՈԱԿ-ի և WWF – Հայաստանի ֆինանսական կարողությունների գնահատում:

3. **Ծրագրի սլանավորում:** 2010-2013թթ. բյուջեն հիմնովին վերանայվել է և հաստատվել է 2010թ.

հոկտեմբերին, նպատակ ունենալով. (i) պայմանագիր կնքել WWF Հայաստանի հետ 300,000 ԱՄՆ դոլարի արժեքով, (ii) ծրագրի արդյունավետ գործունեությունը ապահովելու համար մեքենայի և գրասենյակային կահույքի գնումը տեղափոխել 2013թ-ից 2010թ., (iii) իրականացնել Ավստրիա կատարվելիք փորձի փոխանակման այցը, որը կազմում է 28,000 ԱՄՆ դոլար:

4. ՊՀՊՏ համակարգի ռացիոնալացում: *“Պետական արգելավայրերի վերաբերյալ ՀՀ օրենսդրության վերլուծություն”* տեխնիկական զեկույցը ներկայացվել էր ՀՀ ԲՆ՝ դիտողությունների և առաջարկությունների համար, իսկ ձևափոխված տարբերակը՝ տարբեր շահագրգիռ կազմակերպություններին: Պահպանվող տարածքների, մասնավորապես արգելավայրերի կառավարումը բարելավելու նպատակով անհրաժեշտ է փոփոխություններ և լրացումներ կատարել “Հատուկ պահպանվող տարածքների մասին” ՀՀ օրենքի, Հողային, Ջրային օրենսգրքերի, “Տեղական ինքնակառավարման մասին”, “Բնապահպանական վերահսկողության մասին”, “Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին” ՀՀ օրենքների մեջ: Տեխնիկական զեկույցի լրամշակված տարբերակը հիմք կծառայի համապատասխան օրենսդրական ակտերը սահմանելու և մշակելու համար: Նախապատրաստվել է նաև “ՀՀ բնապահպանական օրենսդրության վերանայման աշխատանքային խմբի ստեղծման մասին” ՀՀ բնապահպանության նախարարի հրամանի նախագիծը:

“Տարբեր գերատեսչությունների կողմից կառավարվող պետական արգելավայրերի կառավարման առանձնահատկությունները” տեխնիկական զեկույցը ներկայացվել էր ՀՀ ԲՆ՝ դիտողությունների և առաջարկությունների համար, իսկ ձևափոխված տարբերակը՝ տարբեր շահագրգիռ կազմակերպություններին: Միայն 10 պետական արգելավայրեր /բոլորը ՀՀ ԲՆ ենթակայության տակ/ ունեն իրենց կանոնադրությունները: Կանոնադրություններն ունեն ընդհանուր բովանդակություն և չեն արտացոլում յուրաքանչյուր արգելավայրի առանձնահատկությունները: Որպես կանոն, արգելավայրերին անմիջական ֆինանսավորում չի հատկացվում: Ընդհանուր առմամբ պետական արգելավայրերի կառավարումը շատ թույլ է: Համարյա ոչ մի հաղորդակցություն չկա հարակից համայնքների և այլ շահագրգիռ կողմերի հետ: Տեխնիկական զեկույցի լրամշակված տարբերակը հիմք կծառայի արգելավայրերի կառավարման բարելավման համար:

“Արգելավայրերի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով արգելավայրերի մասնակցային կառավարմանը” միջազգային փորձագետի կողմից ներկայացված տեխնիկական զեկույցը հիմնված է 12 երկրներում IUCN IV կատեգորիայի պահպանվող տարածքների կառավարման վերաբերյալ հետազոտությունների վրա: Արդյունքը հակիրճ կարելի է բնութագրել հետևյալ կերպ.

Անբավարար են կառավարման, կառավարման կազմակերպման, կառուցվածքի և գործընթացների վերաբերյալ հասանելի տվյալների բազան և նյութերը: Այնուամենայնիվ,

Զանազան գործողությունների և գործընթացների մեծ մասը շատ դեպքերում, հավանաբար, հազիվ թե համեմատելի և կիրառելի լինեն ՀՀ արգելավայրերում,

Մասնակցային մոտեցման և համընդհանուր, համագործակցային կառավարման փորձի լավ օրինակներ ավելի շուտ կարելի է գտնել IUCN II կամ V կատեգորիայի ՊՏ-ներում, քան IV կատեգորիայի ՊՏ-ներում,

Բազմակի օգտագործման էկոհամակարգերն ավելի համապատասխան են IUCN V կատեգորիայի ՊՏ-ներին, քան IV.

Պահպանվող տարածքների կառավարմանը և միասնական կառավարմանը համայնքների ներգրավման լավագույն դեպքեր ներկայացված են հիմնականում Ավստրիայի օրինակներում:

Մասնավորապես. 1/ կազմակերպված և համակարգված համագործակցություն համեմատաբար մեծ թվով համայնքների, հողատերերի և շահառու կազմակերպությունների միջև, այդ թվում, համապատասխան տարածքային կառավարման և նրա վարչակազմի նախաձեռնությամբ և կայուն ու ամուր աջակցությամբ, 2/ կառավարման և ղեկավարման խնդիրների պատվիրակում /բացառությամբ օրենքի գործադրման/ որևէ շահույթ չհետապնդող կազմակերպության, որը ղեկավարվում և ֆինանսավորվում է Կառավարության կողմից, 3/ մեկ կամ մի քանի համայնքների կողմից անմիջական կառավարում: Բոլոր դեպքերում զբոսաշրջությունը, հանգիստը, գյուղատնտեսական անտառագիտությունը և այլ օգտագործման շահերը ինչպես նաև հասարակայնության հետ կապերը, իրազեկվածության բարձրացումը, կրթական և գիտական գործունեությունը կարևոր դեր են խաղում: Ինչևէ, բնության ակտիվ պահպանությունը ոչ պակաս թիրախային խնդիր է:

Հիմնվելով միջազգային փորձի վրա, նախնական ուսումնասիրություններ են կատարվել “Զանգեզուր”, “Խուստուփ”, “Գնիշիկ” արգելավայրերի կառավարման մոտեցումների վերաբերյալ:

Ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ առկա տվյալները հավաքվել և վերլուծվել են նախատեսվող

“Խուստուփ”, “Գնիշիկ” և “Զանգեզուր” պետական արգելավայրի համար:

5. Իրազեկության բարձրացում և համագործակցություն: Իրազեկության բարձրացման և գործընկերության կառուցման վերաբերյալ գործողություններ են իրականացվել Սյունիքի (Քաջարան, Կապան, Մեղրի, Շիկահող, Ներքին Հանդ) և Վայոց Ձորի (Եղեգնաձոր, Ագարակաձորի, Արենիի, Գնիշիկ) մարզերում՝ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական համայնքների, ՀԿ-ների, ՋԼՄ-ների և ԲՀՊՏ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ: Տեղաբնակներին հուզող հիմնական խնդիրը, որը քննարկվեց, պահպանվող տարածքների հիմնման և կառավարման դեպքում ավանդական գործունեության և եկամուտների սահմանափակումներն են տեղական համայնքների համար:

Ծրագրի նպատակները և ակնկալվող արդյունքները ներկայացվել են Սյունիքի մարզպետարանում 2010թ. հունիսի 25-ին՝ փոխմարզպետի մասնակցությամբ և Վայոց Ձորի մարզպետարանում 2010թ. հոկտեմբերի 25-ին՝ մարզպետի մասնակցությամբ: Երկու հանդիպումները լայնորեն լուսաբանվել է տեղական ՋԼՄ-ներով:

Համաձայնություն է ձեռք բերվել միասնաբար շարունակել մատնանշել և քննարկել բոլոր պլանավորված գործողությունները:

6. Փորձի փոխանակման այց արտերկիր: Սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 1-ը խումբը, որում ընդգրկված էին Սյունիքի փոխմարզպետը, Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը, ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալը, Քաջարանի քաղաքապետը, Արենիի գյուղապետը, 4 պահպանվող տարածքների տնօրեններ և ծրագրի կառավարման համար պատասխանատու 3 անձինք, ընդհանուր 12 հոգի, այցելեց Շթիրիայի և Կարինտայի, ինչպես նաև Սլովենիայի պահպանվող տարածքներ: Բնտենսիվ հանդիպումներ տեղի ունեցան Շթիրիայի և Կարինտայի կառավարության ներկայացուցիչների, պահպանվող տարածքների, պահպանվող լանդշաֆտների ղեկավարության, տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկատերերի, կրթական և տեղեկատվական կենտրոնների, մասնավոր բնապահպանական ձեռնարկությունների ներկայացուցիչների հետ: Մասնակիցները ցանոթացան պետական և տեղական աղբյուրներից պահպանվող տարածքների ֆինանսավորմանը, եռակողմ անդրսահմանային համագործակցությանը, կառավարման և բիզնես պլանավորման նախագծմանը, որոնք կաջակցեն եկամտաբեր գործունեություն իրականացնելուն, պահպանվող տարածքների հետ համագործակցության համաձայնագրերի պատրաստմանը, գովազդմանը, հատուկ կառույցների, նշանների և ծառայությունների, կրթական և տեղեկատվական տպագրական նյութերի և ցուցահանդեսների կազմակերպմանը:

Հյուրընկալող կազմակերպությունների (Կարինցիայի և Շթիրիայի ֆեդերալ կառավարություններ, Environmental Consulting Klagenfurt, Freiland Environmental Consulting Civil Engineers, REVITAL Civil Engineers գրասենյակներ) ”Նոքբերգե“, “Տրիգլավ” և “Հոհե Թաուերն” ազգային պարկեր և “Հուլիոսյան Նախապետը” և “Հարավ շթիրիական խաղողի այգիներ” բնության պարկեր) համաֆինանսավորումը ուսումնական այցի, հանդիպումների, փոխադրման, սննդի և ընդունելությունների, ուղեկցման և թարգմանության կազմակերպման համար կազմում է 24,281 Եվրո, այսինքն մոտավորապես 33,300 ԱՄՆ դոլար:

Ավստրիացի գործընկերների կողմից փորձի փոխանակման այցի նախնական ամսաթիվը 2011թ. մայիս-հունիս ամիսներն են:

7. Ուսումնական ծրագրեր. Բացահայտվել է արգելավայրերի կառավարիչների և տեղական համայնքների համար պետական և տեղական ուսումնական ծրագրերի հավանական մասնակիցների շրջանակը: Նրանց կարողությունների գնահատումը ցույց է տվել արգելավայրերի կառավարիչների և տեղական համայնքների սովորական անդամների, ինչպես նաև տարբեր արգելավայրերի կառավարիչների միջև գիտելիքների և փորձի մեծ տարբերությունը: 2010թ. համար նախապես պլանավորված վերապատրաստման դասընթացները հաջողություն չէին ունենա և տեղափոխվեցին 2011թ.: Ուսումնական ծրագրերը և դասընթացների փաթեթները կհարմարեցվեն հավանական մասնակիցների իրական պահանջներին:

8. Մոնիտորինգ և հաշվետվության ներկայացում: Մոնիտորինգի և հաշվետվության փաստաթղթերը կազմվում են համապատասխան ՄԱԶԾ Ծրագրային մոնիտորինգի և Գնահատման պլանի: Սկզբնական հաշվետվությունը ներկայացվել է 2010թ. փետրվարին, 2010թ. առաջին, երկրորդ և երրորդ կիսամյակների, ինչպես նաև տարեկան առաջընթացի հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են ԳԷՀ և Բնապահպանության նախարարություն:

IV. ԱՊԱԳԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ

2011թ. համար նախատեսված են հետևյալ գործողությունները.

1. Իրավական ակտերի մշակում.

i/ Իրավական ակտերի նախագծերի մշակում,

ii/ նախագծերի քննարկումներ շահագրգիռ կողմերի հետ.

iii/ նախագծերի ներկայացում ՀՀ բնապահպանության նախարարություն.

iv/ արգելավայրերի արդյունավետ կառավարման ուղեցույցների մշակում (“Պետական արգելավայրերի կանոնադրությունների մշակման սկզբունքները”, “Պետական արգելավայրերի կառավարման և բիզնես պլանների մշակման սկզբունքները”, “Պետական արգելավայրերի վերաբերյալ շահագրգիռ կողմերի միջև կոնֆլիկտների բացահայտման և կարգավորման սկզբունքները”).

2. Հասարակության իրազեկվածություն.

i/ Պետական արգելավայրերի վերաբերյալ համայնքների իրազեկվածության մակարդակի հարցումների արդյունքների ամփոփում, վերլուծություն և Ձեկույցի ներկայացում.

ii/ Ծրագրի հիմնադրույթների, խնդիրների և արդյունքների վերաբերյալ թեմատիկ հանդիպումների կազմակերպում շահագրգիռ կողմերի հետ.

iii/ Արգելավայրերի կառավարման տարբերակների քննարկումներ շահագրգիռ կողմերի հետ, արդյունքների ամփոփում և Ձեկույցի ներկայացում.

3. Վերապատրաստում.

i/ արգելավայրերի կառավարիչների և տեղական համայնքների ղեկավարների կարողությունների գնահատում

ii/ ուսումնական ծրագրերի և դասընթացների փաթեթների մշակում և հարմարեցում հեռանկարային մասնակիցների իրական պահանջներին

iii/ ուսումնական դասընթացների իրականացում

iv/ ուսումնական դասընթացների վերաբերյալ քաղած դասերի քննարկումներ

4. Կենսաբազմազանության գույքագրում

i/ <<Գնիշիկ>>, <<Ջանգեգուր>> և <<Խուստուփ>> արգելավայրերի կենսաբազմազանության վերաբերյալ առկա տեղեկատվության ամփոփում, դաշտային ուսումնասիրությունների ծավալի որոշում և Ձեկույցի ներկայացում.

ii/ Կենսաբազմազանության գույքագրման դաշտային ուսումնասիրություններ և ավարտական Ձեկույցի ներկայացում:

5. Ինստիտուցիոնալ կառուցվածքի բարելավում.

i/ Մշակել Գնիշիկ և Խուստուփ արգելավայրերի կանոնադրությունները

ii/ Քարտեզավորել պլանավորվող Խուստուփ և Գնիշիկ արգելավայրերի և հողօգտագործման գոտիների սահմանները

6. Կարողությունների զորացում.

i/ Գնահատել հաստատված Ջանգեգուր և առաջարկվող Խուստուփ և Գնիշիկ արգելավայրերի կառավարման կարողությունները

ii/ Մշակել երեք արգելավայրերի համար հողօգտագործման տարածքային պլաններ՝ հիմք դնելով մասնակցային գործընթացը

7. Կառավարման համակարգի բարելավում.

i/ Մշակել Գնիշիկ և Խուստուփ արգելավայրերի կառավարման և բիզնես պլանները, ինչպես նաև պահպանման գոտիների պլանները

ii/ Առնվազ մի արգելավայրում իրականացնել պահպանության ծրագիրը

iii/ Առնվազն մի արգելավայրում իրականացնել այցելուների ծրագիրը:

V. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

2010թ. փաստացի ծախսերը 16.03.2010-31.12.2010 ժամանակահատվածի համար կազմում են 196,547.93 ԱՄՆ դոլար /90.7%/: